## Արձանագրություն N 2-2

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

13.05.2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լ. Մելիքյան |
| Անդամներ՝ | Կ. Բրուտյան |
| | Էդ. Առուստամյան |
| | Ա. Աչոյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Հ. Պապյանը

### 1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին

---

(Լ. Մելիքյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ առողջապահության նախարարությունից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեից, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացված գրությունների և «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի համաձայն գնման ընթացակարգի մասնակիցներ «Ավանգարդ շին» ՍՊԸ, «Էկո Սիթի Գրուպ» ՍՊԸ և «Դ և Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հայտերը համապատասխանում են ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

1.2 Գնման ընթացակարգի մասնակից՝ «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>«ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում</u>**

- հայտով ներկայացված նմանատիպ պայմանագրերի հանրագումարը պակաս է գնման գնի 60%-ից: Հիմք ընդունելով Ձեր համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի 1.2.1 կետի պայմանը՝ անհրաժեշտ է ապահովել հրավերի նմանատիպ պայմանագրերի հանրագումարի 60%-ին վերաբերող պահանջը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիումին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 14.05.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում շտկումը ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/6 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---------------------------------------------------------------------

(Լ. Մելիքյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 15.05.2026թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Լ. Մելիքյան

Անդամներ՝ ---------------------------------------- Կ. Բրուտյան

---------------------------------------- Էդ. Առուստամյան

---------------------------------------- Ա. Աչոյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան